

ՏԵՐ ԵՐ ՏՆՕՐԷՆ
Ե. ԹՐՈՍՍԻԱՆ
 ԱՄՍՈՒ ԿԱՐ ՈՐ ՆԻ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
 ՊԵՏՐ Ե ՈՂԶՆԻ, ԱՌ
 ՏՆՕՐԻՆ. ԱՐՇԱՆՈՅՍ ԴԱԳՅԻ
 ԳԱԶԻՐԷ (phouf n. l. uparap)
 E. TOROSSIAN
 Directeur-propre, du journal arménien
ARCHAÏOVICE
 LE CAIRE (Égypte)

ԱՐՇԱՆՈՅՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՐԹՈՒՆՈՒ ՆԱՄԱՐ
 Տարեկան, ողջ դասկն. 60
 Վեցամսեայ » 35
 ԵՍՏՐ ԵՐԹՈՒՆԸ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ » 12
 ՔԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՏԻԿ Ե
 ԵՒ ԹՂԵԱՍԻ ԾԱԹԲԸ
 Խմբագրութեան վրայ :
 Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չեն օրուի:
 ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԷ
 Կանխիկ վճարելի են

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ. ՊԵՐՈՒՆ Մ. Յ. Գ.

«Արշալոյս» ի վերջին թիւին մէջ «Անդր-դիացոց տկար կողմը» վերնագրով ձեռնարկուածը առիթ տուաւ ինծի ներկայ պատմութեանը ուղղել ձեռնարկելու հասցէին:

Յայտնի ճշմարտութիւնն է որ, ինչպէս որ յայտնութիւնները գովաբանելու նոյնպէս ալ ձախողութիւնները անտեղի բաժնաստանքներու առիթ կուտան միշտ, շատ անգամ կ'ընտանացանք ազգերու կամ անհատներու վրայ ոչ այնչափ անոնց ներքինին վրայ դադարաբար ունենալով այլ պարզապէս արտաքին երեւոյթներէն դատելով, որոնք խաբուսիկ կրնան ըլլալ:

Այսպէս ալ Թրանսօվալի այս վերջին պատերազմին մէջ երբ Անդրիացիները մի քանի պարտութիւններ ունեցան իրենցմէ անհամեմատ կերպով տկար երկրագործ-ժողովուրդէ մը և այս կերպով ծանր կացութեան մը մատնուեցան, ամեն կողմէն հակաբրտանական հոսանք մըն է սկսաւ և Մեծ ազգի ծաղրելի տարր մը դարձաւ:

Արդար ըլլալու համար անցողակի կը խոստովանիմ որ Անդրիացիները անիրաւ գործ մը բրած եղան Պօթիներուն հետ պատերազմի բռնուելով, և թերևս այս անիրաւութեան պատիժն է որ կը քաշեն կոթ մինչև հիմա և . . . Բայց դուք, ներկայ պատերազմին անթիւ անդրիացիներուն տկար կողմը ցոյց տալ ջանալով կը մտնաք այն մեծ առաւելութիւնները և յատկութիւնները զորս ունին անոնք աշխարհի միւս բոլոր ազգերուն հետ բազմատեղի իրենց իսկ խոստովանելովեամբ այս պատերազմը մեծ սխալ մ'եղաւ անդրիական դիւանագիտութեան համար, բայց առաջին վայրկեանին իսկ հասկցան այս սխալը և զայն դարմանելու հետապնդեցան. վտանգին առջև ուղղաբար և յանդուգն ըլլալու յատկութիւնը որ անդրիական ազգիչ է'ն մեծ արժանիքներէն մին է, այս միջոցին երևան եկաւ այնպիսի կերպով մը, որ սքանչազօմի միայն պիտի տեսնուի: Անդրիացիները կարևորութիւն չեն տար թէ ուրիշները ինչ կը խօսին իրենց համար այլ կը նային թէ իրենք ինչ կ'ընեն: Այս, անձնապատան և քիչ մ'ալ գոռոզ են. բայց ոչ ծանծաղամիտութեան ստիկներ:

Դուք կը բազմատեղ անդրիացիները գաղիացիներուն հետ և այս վերջինները գերազանց կը գտնէք որովհետև անոնք քաղաքավարական ձևեր ունին, թէ տարարին են, թէ շուտ բարեկամանալու յատկութիւնը ունին և թէ անոնց նկարագրին ու մերիմին մէջ շատ մը նման հանգամանքներ կան եղբր, (ըսել է կը հաւնիք մեր հայերուս նկարագրին որուն վրասակար հետեանքները մէկէն աւելի անգամներ տեսնելու գոթազգութիւնը ունեցանք): Բայց ընդհակառակը. առանց ուրանալու փրանսական ազգին ինքնուրոյն մեծութիւնը, երբ քաղաքաբար ըլլանք այս երկու ազգերը, գերազանցութիւնը անդրիացիներուն կողմը հակած կը տեսնենք. ի նկատի առնելով անոնց պաշարին բնաւորութիւնը, դրակաշնութիւնը, թունդ հայրենասիրութիւնը, ընտանեկան նկարագրը, առողջ դաստիարակութիւնը, որոնցմէ գրեթէ զուրկ են ֆրանսացիները և որոնք իրաւամբ վայելել կուտան անդրիացիներուն մեծ ազգ մ'ըլլալու համար:

Դուք անդրիացիներուն ատեն ըլլալուն պատճառներուն մէջ կը գտնէք նաև այն թէ անոնք արեւելիներուն վրայ ստորին գաղափար մը ունին, բայց չեն հասկնար այն պատճառը, որով հայերուս հակակրթութեան արժանի կ'ըլլան կար անդրիացիները: Այս-րակաւ չ'ըլլանք. Գանի սր դուք գերազանցութիւնը գաղիացիներուն կ'ուտաք, ուրեմն եթէ կ'ուզէք ակնարկ մը մեր տաղնապի և տառապանքի տրեւում և անհապախ տեսնենք որ ապահովապէս շատ բան պարտաւոր ենք անդրիական պաշարի ունութեան և անոնց բարեբարելու եղանակին՝ քան ֆրանսական տաքարիւնութեան և անոնց քաղաքավարի ձևերուն. մինչ ֆրանսական գթանքատութիւնը մեր գոթաբարութիւնը կը շահագործէր կրօնական երկպառակութիւններ ձգելով մեր մէջ, անդին անդրիական մարդասիրութիւնը անպայման և առատօրէն նուիրեց իւր սրկիները ի նպաստ Մեծ Մարգասպանի զոհերուն: Ապրիլիստ չ'ըլլանք. նա կը մաղթէի որ մեր նոր սերունդը, անշուշտ իւր ազգային ինքնատիպութիւնը պահելով իրենց բոլոր քերականներով և ասելի նկարագրով անդրիական բնաւորութիւնը իւրացնեն քան քաղաքավարի կեղծ ձևերը և տաք արիւն բնաւորութիւնը ֆրանսացիներուն:

Զակագիկ, 8. Հ.

ՄԵՐ ՊԵՏԻԿՆԵՐԸ

Այժմեղութեան զուրկ չէ այս նիւթը: Մեր մատաղ սերունդին կրթութիւնը ամեն ժամանակի համար կենսական խնդիր մըն է. Մեր ազգին ապագայ յոյսերն են անոնք. կ'արժէ որ մեր ամենախորին ուշադրութիւնը տանք զանոնք ըստ արժանւոյն պատրաստելու կիանքի պայքարին համար:

Ամերիկացիք որ բարձր աստիճանի ուսման վարական ժողովուրդ մըն ենք այնչափ հաւանք չեն ընծայեր բնական ճիւղերու և ժամանակակից յատկութիւններէն: Այս գաղափարը տածողներէն անոնք որ ծայրայեղութեան գայած են, կը սխալեն թէ մարդ մը ինչ որ է, խորութիւն դաստիարակութեան արդիւնք է, թէ հնարաւոր քան է կըրթութեան մընը տղայ մը ինչ որ կ'ուզենք, պայմանաւ որ անոր հասարակ մարդկային կարողութիւնները վրասուած չ'ըլլան. հիւանդութեան մը կամ գիպուածով:

Ընդհակառակը կան ուրիշներ այժմ որ կը հաւատան թէ դաստիարակութեան անհարող է փոխել բնութեան պարսկանները թիւրքերէն որ կը կարծենք կրթութեան մը և ջանինք լինանք զբաղ, կրթիչ կը ապագայ մէկ հարթագծով երբ խնամակալութիւն ազգեցութիւնը կը վերանայ:

Սակայն ճշմարտութիւնը կը փայտարայ սա իրողութեան մէջ թէ ճշմարտութեան թիւրքութիւնը և թիւրքեր նոր կարողութիւններու եւ ճիւղերու ողորմ մը մտնին մէջ, սակայն կը յղկէ, կողորոշէ կ'ուսկըզօծէ հոն թագուն կերպով գոթութեան շփոխող կարողութիւնները եւ այսպէս ի յակար կը բերէ զանոնք:

Եւ ճիշտ ըստ գիտողութիւն մըն է ուսման նկատմամբ. անթէ յիսուն տարի վերջը քնած լինէ՞ր, կամ «թէ քնած արժանւոյն ձեռք մտաւոր կարողութիւնները դաստիարակութեան ըլլալին», ըսկերութեան մէջ բարձր դիրք մը սիրտի բռնէր: Այս ցոյց կուտայ թէ կան շատ մը թագուն կարողութիւններ որ անմասն մնացած են կրթութեան զուրկ ըլլալուն համար: Արդեօք քանի՞ մեծ տաղանդներ ոչնչացած են այս կրթութեան պատճառաւ և մարդկութիւնը զրկուած է անոնց օգուտներէն: Գանի՞ աղամայիներ սրբիւրած են իրենց ճառագայթները չորս դիւն սիտեղէ, զորենք պատող կոշտ կեղեւներէն մաքրուած չ'ըլլալուն համար:

Գանի՞ բանաստեղծներ, զգալիներ և քիւսանագէտներ կը գտնուին ժողովուրդին մտք խառնուում մէջ, որք անայտ կը մնան թշուառ ու թեկան և աղքատութեան ճիրաններուն մէջ: Այստ շահեկան է ծնողքի մը համար խորհիլ այն հպարտականութիւններուն վրայ, որոնք իր գլխիկնապագան կը պարունակեն:

Կրթութիւն ըսելով սոսկ դպրոցական դաստիարակութիւնը ըսել չենք ուզել: Կրթութիւնը հայրենի տունէն, այժ, որբանէն սնուել է: Կուգայ ժամանակ մը երբ տղան պէտք է յանձնել ուրիշներու խնամքին անոր մտքը որակաւ զարգացման համար, սակայն ատով ճիշդը պատասխանատուութեան գերծ չ'մնար: Այս պայքարը կը զրկեն զաւակը կրնայ կանոնաւոր ըլլալ, անոր

ուսուցիչները կարող եւ տնօրէնը վստահելի ան-
ձինք կրնան ըլլալ, եւ տակաւին անոնք չեն կըր-
նար ստանձնել կրթութեան այն մասը, որ ծնող-
քին կը պահանջէ: Կան ծնողքներ որ կը կարծեն
թէ իրենց պարտականութիւնը կատարած կըլլան
մերթ Ընդ մերթ վարժապետին կամ տնօրէնին
ուսուցչութեան վրայ ճառ մը խօսելով: Այս սո-
վորութիւնը միայն մէկ արդիւնք կ'ունենայ. այդ
անձին խոր տգիտութիւնը կը յայտնէ: Ուսուցիչ-
ները չեն սիրեր ծնողաց միջամտութիւնը տղայոց
առնելիք դասերուն նկատմամբ: Վստահութիւն
ունենալու ենք անոնց գործունէութեան:

Կրթութեան այն մասը որ ծնողաց կը պատ-
կանի խիստ կանուխ ժամանակէ մը կ'սկսի. տղան
դեռ դպրոց երթալու հասակին չ'հասած: Հէրպերթ
Սթենսըր իր «Դաստիարակութիւն» անուն գրքին
մէջ ուշադրութիւն կը հրաւիրէ երախային նախ-
նական շարժումներուն եւ հայեցողածքին, որ թէեւ
անիմաստ եւ ասուշ կը թուին, սակայն կ'ըսէ,
« առաջին քայլերն են գործունէութեանց այն
շարքին որ իր գազաթնակէտը կը հասնի անտե-
սանելի մոլորակներ գտնելով, նոր մեքենաներ
հնարելով, գլուխ գործոց հեղինակութիւններ ընե-
լով »:

Եւ արդարեւ ո՞վ չէ դիտած երախային սեւե-
ռեալ հայեցողածքը, մասներուն եւ ձեռքերուն
արագ շարժումը, ամեն բան բռնելով իր պոստիկ
բերանը սեղմեցնելու ջանքը, եւ չէ գողտկարած թէ
չտր բաներ կան որ մանուկը արդէն գիտնալ
կուզէ: Ի՞նչ է այդ առարկային հեռուստութիւնը.
կրնամ հասնիլ անոր. կա՞րծք է թէ կակուղ. հա՞մը
ինչ է արդեօք: Աստեք են կարծես հարցումները,
զորս մանուկը անդադար կուղղէ քեզ: Աստեք են
նախաշարժը, առաջին կաթիլները հարցումներու
տեղատարափին, որով աղաք մեզ կը ձանձրացնեն
օրն ի բուն, արտասանելու կարողութիւնը երեւան
եկածին պէս: Բարձրամէջի մէջ նախարարութեան
պաշտօնէի մի ուղղուած հարցումները յաճախ
դիւրագոյն են պատասխանել քան զայնա՝ որով
երեք կամ չորս տարեկան տղայ մը իր մայրը կը
չտարեցնէ:

Այո՛, կը հարցնէ նա, որովհետեւ կուզէ գիտ-
նալ. ո՞րչափ կը սխալին այն ծնողքները որ այս
հարցումները անտես կ'ընեն եւ կամ կոշտ կերպով
կը յանդիմանեն իրենց զաւակները լռել: Այս վար-
մունքով անոնք կը մարեն տղայոց մտքին մէջ
նոր ծագած գիտնալու տենջը: Սորվեցունելու մէջ
փորձառութիւն ունեցողները գիտեն թէ այն աշա-
կերտն աւելի յուսալի է որ գաստուտիւն բացատ-
րութեամբ լոկ գո՛հ չ'ըլլալով, հարցումներով
կուզէ լուսարանել իր միտքը:

Ուրիշ բան չէ մանկապարտէզի դրութիւնը
եթէ ոչ ինչ ինչ գործիքներով եւ այս նպատակին
համար չ'նուած խաղալիքներով տղայոց միտքը
զրգուել եւ գիտնալու փափաքը աւելցնել:

Անկարելի է չափազանցել արժէքն այս պա-
հանջկոտ հարցումներուն: Անոնք ցոյց կուտան
թէ առաջին եւ բնական դաստիարակը ծնողքն է:
Մեծ պատահութիւն մը կայ մէն մի ծնողքի համար
տղայոց սորվելու այս իրական կամեցողութեան
մէջ: Ո՞վ որ ալ ըլլայ անոր ապագայ դաստիարակը,
հիմա կարգը բուկ է: Այս պատահութեան օգուտ
չ'քաղելը, անփոյթ եւ զանցառու գտնուելը պար-
զապէս ոճիր է: Ի՞նչ պիտի չ'տայ քարոզիչն իր
ամպիւրին մէջ, ուսուցիչն իր գրասեղանին առջեւ
ունենալու համար այսչափ հոռուուն, կամեցող
եւ վստահող ունկնդիրներ: Պատասխանէ՛ դաւելից
հարցումներուն եւ մի՛ վհասեցնելու դայն: Անշուշտ
այս՝ համբերութիւն եւ հանձար կը պահանջէ.
սակայն ծնողական սէրը կը յաղթէ այս դժուա-
րութեան եւ վարժութիւնը կ'աւելցնէ հանձարն:
Միայն պատասխան տալէ զգուշացի՛ր եւ անուղիղ
բացատրութեան հրաժարէ՛. մանկան մտքին վրայ
զրոյշուած առաջին տպաւորութիւնները խորին
կ'ըլլան եւ յաճախ անշնչելի: պատասխանները
պարզ, մաքուր եւ կրցածից չափ մանկական մըտ-
քին հասկնալի կերպով թող ըլլան:

Մէն մի ընտանեկան յարկ մանկատանութեան
վայր է. հոն կը մտուցուի մեր ապագայ սերունդը.
հոն ամեն տեղէ աւելի պիտի կրթութիւն եւ զարգանան
մեր անուան յաջորդները, հոն պէտք է ներշնչուի
վեհանձնութեան եւ ազնուութեան առաջին գա-

սերը. հոն կ'սկսի հոգին եւ սիրտը իր սկզբնական
ապականութենէն մաքրելու գործողութիւնը. հոն
կը մարդուն անոնց հոգեկան եւ մտաւորական
կարողութիւններն, առաքելի եւ երկրազած քրիս-
տոնեաներ. օգտակար եւ ազգասէր քաղաքացիներ
ըլլալու:

Մանկան մտքին վրայ կանուխ ձգուած տպա-
ւորութիւնները մեծ ազդեցութիւն կը բանեցնեն
անոր ապագայ կենաց վրայ: Իմաստասէրին մէկը
ըսած է թէ մինչեւ հինգ տարեկան հասակին մէջ
տղան իր քովը մնալէն վերջ, հոգ չէ թէ որո՞ւ
ինամքին կը յանձնուի: Իրաւացի են այս դիտո-
ղութիւններն, որովհետեւ մանուկ մը մինչեւ այս
տարիքը կը նմանի կակուղ ձեւառու կաւի: Մեր
սորվածներէն շատերը վերջին տարիներուն մէջ
կը մոռնանք. բայց այն բաները որ խառնուած
են մեզ կ'աղմոզ տարբերուն հետ, ժամանակի
ձեռքը անկարող է ջնջել: Երբ մանուկ մը կը
մեծնայ այնպիսի հօր մը հակողութեան տակ, ու-
րուն գլխաւոր նպատակն է հարստութիւն զիջել,
այդ մանուկը առանց ինքը գիտնալու արժաթա-
սէր կ'ըլլայ. կամ եթէ հայրը երկրազած եւ առա-
քելի է, զուակն ալ քիչ բացառութեամբ նոյնը
կ'ըլլայ:

Կը պատմուի թէ Կարքեղոսացի երիտասարդ
մը որ իր ոճրագործութեանց համար մահուան
դատապարտուած էր, կախաղան առաջնորդուելու
պահուն խնդրեց որ իր վերջին հրաժեշտի ողջոյնը
տայ մօրը եւ անոր ակննջն ի վար բան մը ըսէ.
Երբ որ մօրը մտեցան անոր ակննջը խաճաւ մէկ
կողմ հանցի եւ ըսաւ. «Այս է վրէժս զոր կը լու-
ծեմ, զիս այսպէս գէշ կերպով մեծցնելու համար»:
Սակայն ասիէ տարբեր է Ս. Օգոստինոսի զգա-
ցումն իր մօրը նկատմամբ: Նա կ'ընդունի թէ
չատ բան կը պարտի անոր. «Եթէ բարիք մը չա-
հած եմ կեանքիս մէջ, ան ալ մօրս կը պարտիմ»
կ'ըսէ: Ինչ՞ Մօնիգա, հակառակ իր արթթեցուն,
հակառակ թափած արցունքներուն Օգոստինոս
չար եւ անտակ պատմանի մը, արքեպոզ եւ շնացող
երիտասարդ մը եղաւ:

(Մնացեալը յաջորդով) Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

ԼՈՆՏՈՆ, 21 Փետրվար

Զօրավար Պուլլըր, կը հեռագրէ թէ՛
հինգերորդ զօրաբաժինը Թիւժէլան անցա-
նաւէ կամուրջի մը վրայէ:

ԼՈՆՏՈՆ, 21 Փետրվար

Զօրավար Բօպըրդս Բաարդպէրկէ կը
հեռագրէ թէ՛ 16 է 18 տեղի ունեցած պա-
տերազմին մէջ՝ Նօքս և Մաքսոնէլտ զօրա-
վարք, ինչպէս նաև 39 սպայ վիրաւորներ
են: Ասոնցմէ զատ Անգլ. զօրագունդերու
կորուստն է, 9 սպայ մեռեալ:

ԼՈՆՏՈՆ, 24 Փետր.

Զօրավար Պուլլըր կը հեռագրէ թէ՛
22 Փետրվարի կուռին ունեցած կորուստն
է երեք սպայ սպաննուած և տասնչորս
վիրաւորեալ, որոնց մէջ կը գտնուի զօրա-
վար Ուին:

Պապերազմը կը շարունակուի:

ԼՈՆՏՈՆ, 25 Փետրվ.

Զօրավար Բօպըրդս Բաարդպէրկէ կը
հեռագրէ թէ՛ ֆետր. 24ի կէս օրին թէ՛ Անգ-
լիական յառաջապահ գունդը 23ին յար-
ձակում կրեր է Նաթալէ եկող Պօէր փոք-
րիկ շոկատներու կողմէ: Պօէր շոկատները,
մեծկակ կորուստով և հարիւրի չափ գերի
թողլով, ետ մղուեր են:

Անգլիացուց կորուստն է 7 սպաննուած
և 27 վիրաւորեալ:

ԼՈՆՏՈՆ 26 Փետր.

Զօրավար Պուլլըր կը տեղեկագրէ թէ՛
20է մինչ 24 Փետրվ., ունեցած կորուստն է, 7
սպայ սպաննուած, 34 վիրաւորեալ և 1 ան-
յայտ եղած:

ԲԱՍՐԻՊՈՒՐԿ 26 Փետր.

Պօէր զօրքեր փորձեցին նոր յարձա-
կում մը ընել Անգլիական զօրաց վրայ,
բայց ետ մղուեցան:

ԲԱՍՐԻՊՈՒՐԿ 27 Փետրվ.

Զօրավար Գրօնտ անպայման կերպով
անձնատուր եղաւ:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՄԸ

Հայ թատերական խումբը կը փութայ
ժամուցանել թէ՛ Վարդանանց ներկայա-
ցումը՝ որ այս գիշեր տեղի պիտի ունենար,
անձրևներու և ցեխերու բնական պատճառ-
ներով յետաձգուած է առաջիկայ Մարտ 2
ուրբաթ գիշերուան:

Գերասանապետ Տիար Ս. Պէնլեանիս որ
օրերս Փարիզէն հոս հասած է, յոյս կայ թէ
պիտի մասնակցի այս ներկայացման, որով
փայլուն ազգային երեկոյթի մը ներկայ
լինելու պիտի արժանանայ Գահիրէքնակ
հայրութիւնն:

Ազնիւ հայ հասարակութեան կը մնայ
ուրեմն, ներկայացումը ամեն կերպով շատ
աւելի շքեղագոյն ընծայելու համար՝ իր
ներկայութեամբ պատուել:

Տոմսերը կը վաճառուին Տիար Կ. Եր-
ՁեկԱՅԵԱՆ ի խանութն ի Շարա Ապտիւ-
Աղիզ և ներկայացման գիշերն թատրոնի
կիշէն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԲԻԱ. — Տամատ Մահմուտ փաշա
վերջերս Բարիդի լրագրաց նամակ մը ուղ-
ղած է, ոսկից կը քաղենք հետեւեալը:

« Հակառակ մեր այն բազմանաց զոր
մենք կ'ուզենք այլևս հերքելու ձանձրոյթը
չ'առնել բոլոր այն սուտ լուրերը որք հրա-
տարակուեցան՝ շնորհուած կամ խնդրուած
կարծեցեալ պայմանաց և մեր Պօլիս վերա-
դարձի մասին, ստիպուած եմք սակայն
իմացնելու ձեզ թէ՛ այս վերջին օրերս
երեցող զանազան հեռագիրք որք — գա-
ղիացի կամ թուրք բաժրաստիճան անձնա-
ւորութեանց միջնորդութեանը շնորհիւ —
մեր Պօլիս վերադարձը կ'իմացնէին, կատա-
րելապէս հնարուած բաներ են:

Եւ ոչ մէկ կերպով, ոչ ուղղակի և ոչ
անուղղակի, ոչ ոք արտօնեալ է վերադարձի
մը պայմանացը վերայ բանակցելու. վերա-
դարձ մը՝ որ անկարելի է մինչև որ մեր
երկիրը չ'ստանայ այն բարենորոգումները
զոր իւր դժբախտ կացութիւնը հարկաւոր
դարձուցած է եւ զոր թախանձանօք կը
պահանջէ ամբողջ ազգը:

— 15 Փետրվար թուով Կ. Պօլսէն հե-
տեւեալը կը հեռագրեն:

«Սուլթանին նախորդ մեծ ախուա-
պետը Իզզէթ փաշա, որ 1893էն ի վեր

Հալէպ արքայութեան էր, պալատ կանչուեցաւ և Մատրիտի Թուրքիոյ ներկայացուցիչ պիտի անուանուի ։

— Ռուսական դեսպանը երէկ Դրան ծանուցագիր մը տուաւ, որուն մէջ պատասխան կը պահանջէ կաւկասիոյ հայոց հայրենիք վերադարձի մասին իր տուած վերջին ծանուցագրին. միանգամայն կը բողոքէ հայոց ելքին, և այն դիմադրութեանը զոր սահմանադրոյն թրքական իշխանութիւնը կուտայ, գործով Թուրքիա եկող ռուսահայոց մուտքին. կը բողոքէ նաև որ Թուրք հիւպատոսը կը մերժեն վաւերագրել հայոց անցագրիները. դեսպանը ազգու կերպիւ կը պահանջէ այս խնդրոց լուծումը ։ Ռուսիոյ այս ընթացքը Դրան վրայ անսխորտ ազդեցութիւն մը գործեց, Դուռը որ ամէ մը ի վեր համոզուած էր թէ խնդիրը պիտի փակուի ։ Փոքր-Ասիոյ հիւսիսային կողմի երկաթուղոյն մենաշնորհներու խնդրանքին մէջ նախապատուութիւն ձեռք բերելու համար է որ կը ծանրանայ տուած ծանօթագրին վրայ. Ռուսիոյ վերագրուած այս դիտումը, այս անհաճոյ վիճակը աւելի կը շեշտէ ։

Միւս կողմանէ «կապէթ տը Ֆրանքֆորտի թղթակիցը կը հեռագրէ 16 թուով. «Ռուսական դեսպանը Սուլթանէն ընդունեց իրաւէ մը և դաշնագրութեան ծրագիր մը՝ յար և նման Պաղտատի երկաթուղոյն պայմանագրութեանը, և որ կը վերաբերի Կարսէն էրզրում լինելիք երկաթուղոյ մը շինութեանը ։ Արդէն կանուխէն Ռուսիոյ մէջ երկաթուղոյ շինութեան ծրագիր մը պատրաստուած էր ։ Կարսէն Սարաքանիէ երկարող, անցնելով Ռուսական նոր գաղթականութեանց մէջէն ։ Ըստ Ռուս-թրքական դաշնագրութեան՝ երկաթուղին պիտի հանգրիպի Քարս-ուրղանի, որ կը գտնուի թըրքական սահմանագլխոյն վրայ, և Արաքսի ձորէն էրզրում պիտի երթայ ։ Գծին երկայնութիւնը 260 քիլոմէթր պիտի լինի ։ Բաց աստի, դաշնագրութեան ծրագիրը կը պահանջէ որ վերոյիշեալ երկաթուղոյ գծին շինութիւնը ռուսական ընկերութեան մը մենաշնորհը լինի, և պայմանք պիտի լինին նոյնը ինչ որ որոշուած է Գերմանիոյ Պաղտատի երկաթուղոյն շինութեանը ։ Ռուսիա նաև մենաշնորհը պիտի ունենայ ռուսական սահմանագլխոյն տանող բոլոր երկաթուղոյ ճիւղերուն ։ Ռազմագիտական տեսակետով մեծ կարևորութիւն պիտի ունենայ Կարսէն էրզրումի երկաթուղին ։

Սուլթանին իրատէն Ռուսիոյ կուտայ նաև էրզրումէ Տրապիզոն երկաթուղոյ մը շինութեան մենաշնորհը. այս մենաշնորհին մէջը չէ երկաթուղոյն ճիւղերը, սրբ գուցէ Պաղտատի գծին մենաշնորհին մէջ պարունակուին ։

— Ժուրնալ Տր ժընեվի Կ. Պօլէն ստացած թղթակցութեան մը հետեւեալները կը տեղեկանանք ։

« Դրամական անապահովութիւնը անփոփոխ է ։ Ելեմտից նախարարութիւնը երկրագործական Պանքայէն 800 հազար լիբայի փոխառութիւն ըրած է, առանց վճարելու յոյսը ունենալու. քաղաքական պաշտօնեաներու պահեստի ամաթոյակներու ինչպէս նաև որբերու գանձարաններէն, մէկ խօսքով ամեն պաշտօնատանց դրամարկղներէն՝ ուր որ հրաշքով քիչ մը սոյակ մնացած էր, աւնուեցան ։

Դրամական տագնապի առթած այս անհանգստութիւնը հետզհետէ մեծ ծաւալ կ'առնէ ։

Եկամտի աղբիւրները կը ցամքին, գաւառներու մէջ տիրող անիշխանութեան և վարչական անկարգութեանց շնորհիւ ։

Ռուսաց խոշոր յուրետես մը ըլլալու մարդկրնայ գուշակել թէ, այս վիճակը երկար չլընար տեւել եւ պիտի փոխուի կամ վերջ մը տրուի ։

— Սուլթանը վազ անցած է դատէն, զոր պիտի բանար «Օրօր» երեք խմբագիրներուն, Իււպէն Կօհիէի, Բիէու Բիյաուի և Շարլ Մալաթօի դէմ ։ Ելլողի աղուէսը հասկցած է դժբաղդաբար թէ այդ գատը Եւրոպայի առջև անգամ մը ևս պիտի պարզէր իր իշխանութեան բոլոր ոճիրները, և խոհեմութիւն համարած է ետ առնելու իր բողոքը ։ Բարոյական յողթանակ մըն է սա այն երեք արի գրողներուն համար, որոնք այսօր Հայկական դատով դաղող գրեթէ միակ անձերն են Ֆրանսայի մէջ ։

ՆՈՐ ԿԵՍՆՔ

— Սուլթանի լուսանկարչապետ Ապտուլլահեան Վիչէն և սղան Ապտուլլահեան Ներսէս, իսլամական կրօնքն ընդունելով, հայրը Ապտուլլահ Շիւքրի, իսկ ազան Ապտուլլահ Զիյա կոչուած են ։

Ապտուլլահեանները Պօլսոյ մէջ խիտ ծանօթ հայ հռովմէական ընտանիք մըն են ։

ԻՐԱՆԻՈՒՆՔ

— Թրանսվայի առաջնակարգ լրագիրը «Փոլիտէմ» այժմ պատերազմական բանակին մէջ կը հրատարակուի եղեր ։ Գլխավոր

խմբագիրները, իր աշխատակիցները և տղապագրողները բոլորն ալ զէնքի կոչուած են, տպարանը կ'աւրի մը վրայ հաստատուած է և թերթը կանոնաւորապէս կը հրատարակուի եղեր, ինչպէս և առաջ ։

— Տրէյֆիւսականները որոշած են էմիլ Զօլային, որ ճշմարտութիւնը երեւան հանելու յանգուզն ձեռնարկողն եղաւ, շքադրամ մը մատուցանել ։ Սիեյլ թերթը այդ նպատակով հանգանակութիւն բացած է և արդէն 1230 հոգի ստորագրած են և վճարած 10,683 ֆրանք ։ Շքադրամի մէկ կողմը Զօլայի պատկերը կայ, իսկ միւսին վրայ գրուած է անոր ըսած խօսքերը « Ճշմարտութիւնը կը փայլէ եւ ոչիկն կրնայ անոր ընթացի խանգարել » ։ Այդ շքադրամը մինչև օրս եղած իր տեսակներուն մէջ մեծութեամբ առաջինն է ։

ՇԱՐԺՈՒՄ

Կ. Պօլսոյ թերթերէն կը տեղեկանանք թէ Յ. էֆ. Նուրեան մեռած է ։

Այս պետական մարդը, որ անբաժան էր միևնոյն ժամանակ ազգային կարևոր պաշտօններէ, հանրութեան վրայ լաւ դազափար մը թողած չէ իր պաշտօնավարութեանց մասին. և կը թողու աշխարհը ո՛չ իբր ազգային գործիչ մը՝ այլ իբր գործիք մը Թուրք կառավարութեան ձեռք ։ Հակառակ գային գործիչներուն ականջը խօսի . . . ։

— Մեծ-Եպարքոս Խալիլ Ռիֆաթ փաշայի որդին ձափիտ պէյը սպաննող հաճի Մուսթաֆան եղևնագատ ատենի վճռին համեմատ որ փետր. 10/ի նոտին մէջ արուած է, մահուան դատապարտուեցաւ միաձայնութեամբ ։

Դատապարտեալը վճռարկէ ատենին գիմեր է ։

Պատ. Խմբագրութիւն

«Արշալոյս» թերթի

Վասպուրականի Որբախնամ ընկերութեան նորընտիր Գործադիր ժողովս կը փութայ յայտնել թէ՛ ամսոյս 18ին, կիրակէ օրը, Ազգ. Մանկապարտէզի սրահին մէջ, առաջին նիստ գումարելով կազմած է իւր Դիւան հետեւեալ կերպով ։

Մեծ. Տնարք՝

Գարեգին Իսազուլեան	Ատենապետ
Լեւոն Ա. Բամպուլքեան	Ատենազպիր
Երուանդ Աւագեան	Փանձապահ
Առաքել Փափաղեան	Հաշուակալ
Տիգրան Պուտաղեան	Քրորագրական
Գրիգոր Աւագեան	
Յարութիւն Թոշուեան	

ԼԱ ՄԻՉՈՒՍԼ ԼԱՅՅ

ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱԾԽԱՐՅԻ ԱՄԵՆԸՆ ՀԱՐՈՒՍԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՍ | ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները ։
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ չի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է ։
Ս. ԼԵՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ ։

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ ։
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխավոր գործ. Մղէքսանգրիա ։

Եւ կը խնդրէ: Տէր Խմբագիր, որ հասիք 2եր զգտանաւ թերթի յա աշխկայ թուոյն մէջ հրատարակել զայս ի գիտութիւն Որբախնամիս Պատ. անդամոց:

Ի դիմաց Գործադիր ժողովոյ
Վասպուրականի Որբախնամ ընկերութեան
Առեւտրային Ատենապետ
Լ. Ա. ԲԱՄՊՈՒՔՅԱՆ Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԾԱՆՕԹ.— Վասպուրականի Որբախնամ ընկերութեան Պատ. Գործադիր ժողովոյն ի հրատարակութիւն մեզ ուղղած սոյն ազգարարութիւնը մեր թերթին մէջ ընդունել վերջ, գիտել կուտանք Գործադիր ժողովոյ Պատ. անդամոց թէ, իրենց այս փութկոտութիւնը օրինական զանցառութիւն մը կը պարունակէ իր մէջ:

Գործադիր ժողովը իւր պաշտօններու խումբները կատարել յետոյ, հարկ էր որ որ ըստ օրինի պաշտօնապէս ծանուցանէր ընդհ. Կիւսանին և Կիւսանը այդ ընտրութիւնը վաւերացնել և իր տոմարներուն մէջ արձանագրել յետոյ միայն, ուղղակի իր կողմէ հրատարակութեան զրկէր:

Առ այժմ այսչափ միայն նկատողութեան կանխեցնք այս խնդիրն, ուրիշ շատ յարմար առիթներու վերապահելով ներքին պարագայ մ'ալ, որ թերեւս միակ շարժառիթը կրնայ եղած ըլլալ Գործադիր ժողովոյն այս օրինական զանցառութեանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԵՐԳԵՏԻԿ ԽՄԲԻՄԸ

Մեր ցեղին բնածին հակումը դէպ 'ի գեղարուեստը համարակութիւն կուտայ ինձ յայտարարելու արգոյ հասարակութեան թէ՛ թուականէս նկատել ձեռնարկած եմ կազմակերպելու հայ երգեցիկ խումբ մը, որ արեւմտեան զրուստիւմը եռաձայն եւ եռաձայն պիտի ուսանի երգել թէ՛ հին եւ թէ՛ նոր շարժարուած երգերու եղանակներ:

Այսօր անհերքելի ճշմարտութիւն մը դարձած է երաժշտութեան օգտակարութիւնն, ազգի մը զգացումներն անհնարելի եւ անոր ոգին արտայայտելու տեսակէտով. այս համոզման վրայ հաստատ, այժմ կուգամ հրաւեր կարգալ այն ամեն երաժշտաւէր երիտասարդներու, որոնք կը փափաքին Գրտուիլ սոյն ձեռնարկէն եւ կը հաճին անդամակցել հայ երգեցիկ խմբին շատ աննշան վճարումով մը:

Մանկաման տեղեկութեան համար կ'իմեւ Հայկազնն սրճարանն, ուր կը գտնուիմ բաց 'ի կիրակիէ ամեն օր ժամը 8էն մինչեւ 12:


Մասնաւորապէս թէ՛ երաժշտութիւն եւ թէ՛ ամեն տեսակ նուագարաններ դաս առնել փափաքողներն եւս կը հրաւիրուին զիւրամատչելի պայմաններով:

Ուսուցիչ
Եւրոպական եւ Արեւելեան երաժշտութեան
ԽԱԶԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 4066, 4755, 9323, 1419, 6983, 6335, 1698, 6489, 3624, 1317, 2048, 2243, 1054, 6643, 2695, 170, 9189, 5452, 1708, 6734, 5434, 7241, 9495, 9484, 2080, 1469, 552

Վ. ԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ
Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ
ՇՈՐԷ-ԱՊՏԻԿ-Ա.ՉԻՉ



Թէ՛յի գործածութեան ընդհանրանալովն, թէ՛յի ճաշակն ևս նորացած է. որով թէ՛յի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քանտանայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻՆՍՍԱՆԻ, ՃՍՄԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿՍՍՏԱՆԻ զխաւոր արտագրիչներէն, որոցմէ արդէն հարած է մեզ. ինչպէս նաև ձըմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉՍՓՍՁԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի զիւրամատչելի են:

Թէ՛ Կ. Պօլտոյ և գաւառաց, և թէ՛ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վատահոլութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու ճեպակի կիտի
եւ գնոց մտային:

Մեծաքանակ թէյ փոքրաքանակ մեղի եղած ԿՍՆԻԿԸ գրամով յանձնարարութիւնը փութով կը կատարուին:

20 — 30

ՏՕՐԵՐ ՏՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առամտարոյժ
Ապսին Շարէ Քուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակռայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաններուն տոկոսնու թիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3—5:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԻՆԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ
ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

Ուօգրի Պաֆ վաճառչան (գտերը, կալիէ-Պիտարի հիօս գիվազը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալուրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան կղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

33—50

ԿՈՊԵՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԿՈՒՍԱՆԿԱՐԱՑՈՒՆ ԵՒ ՆԿԱՐԱՑՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ վարելու լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է:

Պօլտոյ մէջ Ապոլլոնի եղբայր տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէ. Բէ. Զեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ արեւմտեան գործատեղի վր կը հիմնէ Էպոլիմի Շաքիա, Կամիկ Օթիլ ՇէֆէրՏՍԻ ճիշդ գիմաց թիւ 3 արարթըմանին կրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ դուրսը կուլիներ ի հարկին: Ակրանցիսըման բնական մեծութեամբ:

Կենդանապիւրծք ամերիկեան մեծնայմվա ուրոնք երէք չեն աւրելի:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միմեարբեր:

Իւղաներկ եւ ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրբու, ակվիթիանս եւլն:

Իրեն զիմով յաճախորդներն հանել առած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք եւ կատարելապէս գո՛ պիտի մնաք:

ՓԱՓԿԱԿԵՐԱՑ ԱԶԲԸ ԼՈՅՍ

ԼՕՐԱՆԹՐԱԶԻ ՅՆՆԻԿ

Որ Կ. Պօլտոյ Բերայի Հալիպ Չարքաիին մէջ ընտիր խմորեղէններ պատրաստելով հոշակ հանած է, այս անգամ Ապոլիմի Պահականացին զիմացի անկիւնը խանութ բացած է եւ կը պատրաստէ տեսակ տեսակ համեմալ քաղցրուէնիք, խմորեղէնք ամենամաքուր եւ ընտիր իւղով:

Հոն զիմով յաճախորդներն իւրաքանչիւրը իրենց ճաշակին համեմալ գոհացը մոկիտի գտնեն:

Հարանիքներու, Երեկոյթներու եւ հրաւերներու համար պէտք եղած անուէրեղէն—խմորեղէնները կը պատրաստէ գոհացիւրու պայմանաւ եւ զիւրամատչելի գնով: